

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Իրկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Ժոյւս
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ

Ծրանշարի մուտք
20 անդրիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրուիր

ԹԻԱՊԱՐՏԸ

Մեր քերթովը, ԹԻԱՊԱՐՏԸ՝ զոր քիչ օրէն գրքի ձեռով հրապարակ կը հանենք, երկու հատորէ պիտի բաղկանայ:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ 2 ՖՐԱՆԿ Է

Մասնաւ փափաքողները այդ երկու ֆրանքը այժմէն խոսքազորեալսն դրկելով, կրնան վստահ ըլլալ թէ ԹԻԱՊԱՐՏԸ կազմուած երկու հատորները քիչ ատենէն կ'ստանան: Այս պատիկ գումարը մեզ հասցնելու դիտարեալսն համար կը յայտարարենք թէ փոխարէնը 10 ց/յ զեղչով ա՛մէն երկրի մասն կադրօլ կընդունինք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համարողութենէս փերագարձայ, երեք շաբաթուան իմ բացակայութեանս միջոցին խմբագրական, վարչական և թղթակցական գործերու սովորականէ մի քիչ տարբեր ուղղութեամբ ընթանալուն պատճառը բացատրել հարկ չէ:

Շնորհակալութիւն մեր յարգոյ աշխատակիցներուն ու բարեկամներուն՝ որոնք բացա՛յալութեանս միջոցին իրենց ջանքը չը խնայցին թերթին կանոնաւոր հրատարակումը չընդհատելու համար. իսկ թղթակցական և վարչական գործերու մէջ աւանդաբար եղած յապաղումները այսօրուէն կը լանանք անզգալի ընել:

Յաւախ է նաեւ ըսել թէ իմ բացակայութենէս օգտուելով՝ ումանք մեր աշխատակցին գէ՛մ խուլ պայքար մըն են սկսած: Ես այդ ամբողջ պայքարը ներկայ թուով կը փակեմ, սպասելով որ ընդդէմ մասնակցները վերջ դնեն իրենց յարձակումներուն. հակառակ պարագային ես անձամբ ձեռք պիտի առնեմ խնդիրը և կարգ մը սարսուռացուցիչ մերկացումներու սիւնակ մը բանալ պիտի ստիպուիմ. բայց կը յուսամ թէ զիս այդ անհաճոյ հարկին տակ դնելու անմտութիւնը չպիտի ունենան անոնք որոնք կը զգան թէ գլխաւորաբար որոնք կ'աղկոտարկեն:

Տնօրէն-Խմբագիր
ԳՈՒՐՊԷՅ

ԹԱՏԵՐԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի Ն Պ Ա Ս Տ

ՌՈՒՍԻՈՅ ՏԱՃԻԱՀԱՅ
ԳԱՂԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Կը ծանուցանենք թէ յառաջիկայ երեքշաբթի գիշեր Նախճոս հայ դերասանական խումբը Պ. Պապանտի առաջնորդութեամբ «Մանգրալ» սրահին մէջ պիտի ներկայացնէ «Ոսկեայ ձիւնաղնիք»ը սրտայայտ թատերգութիւնը ի նպատակ «Ռուսիոյ Տաճկահայ գաղթականներուն»:

Հոգատար Յանձնախումբս տարակոյս չունի որ Վառնայի հայ ժողովուրդը պիտի փութայ ներկայ գտնուիլ այս հայրենասիրական ներկայացումին, որուն հասոյթը պիտի յատկացուի թշուառութեան եւ մահուան մատնուած գաղթականներու վիճակին դողն թեթեւացում մը բերելու:

Ի գիտաց Հոգատար Յանձնախումբի Ատենապետ Գրանձապետ Ն. Գ. Բեասանեան Գ. Սահարանեան Վառնա, 22 Նոյեմբեր 1902

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆԶԻ. — Հ. Ֆ. Բ. Լիւնչի, պատկերովն եւ ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տոնապետեան. գինն ճանապարհածախսով 3 ֆրանք. գինով աշխատասիրողին՝ 117 Կօսովսկի Քօս - Լոնտօն W 2-8

ՌՈՒՍԻԱՆ ՈՒ ՄԵՆՔ

Բ.

Նախորդ յօդուածի մը մէջ, Ռուսիոյ վերաբերութեամբ հայ գործիչներու հետեւած քաղաքականութեամբ վրայ խօսելով՝ կեդրականէի. «Քանի որ Ռուսիոյ դէմ քաղաքականութեան մը հետեւելով բան մը չենք շահիր, ինչ պիտի կորսնցնէինք ուստի բացառականութեան մը յարելով. կամ վերջապէս ի՞նչ կրնայինք ակնկալել»:

Ու նախ՝ դիտել պիտի տամ թէ՛ Եւրոպայի քաղաքական արդի կազմակերպութեանցը մէջ, Ռուսիան ամենէն զօրաւոր պետութիւնը կը ներկայանայ. Ռուսիա Ֆրանսայի հետ կապուած է զինակցական անքակտելի կապերով, որոնք կընդգրկեն միանգամայն բովանդակ աշխարհի տարածութեան վրայ անոնց հետեւելիք քաղաքականութիւնը. մինչ անկող. ճարտարական նորակոյտը զինակցութիւնը Եւրոպայի խնդրներուն իրան կը վերաբերի, ու երբեք զինակցութիւնը—որուն հիմքը աւելի քան խախտուած են—Եւրոպայի մէջ միայն գոյութեան իրաւունք կը վայելէ:

Ուրեմն, լաւ նկատողութեան առնելը հետեւեալ հիմնական կէտեր. Ֆրանսական հանրապետութեան քաղաքականութիւնը, տասնեակ տարիներէ ի վեր, բացորոշապէս ուստական քաղաքականութեան վրայ ձեւուած է, ինչպէս ապագային մէջ ալ ձեւուելու է. հայկական ազգնապին տեւողութեանը միջոցին, սկզբունքով, ծրագրերով իրարմէ հիմնովին տարբեր, իրարու հակառակորդ կուսակցութեանց պատկանող արտաքին գործերու նախարարներ իրարու յաջորդեցին, Հանօգոյէն, Պէռլըրոյէն մինչեւ Տէլբաւէ, որ իրեն պաշտօնակից ունեցաւ Միլոսանի նման բուն ընկերակցական երեսփոխան մը, որը 1897ին, իբր պարզ երեսփոխան, Հայերու ինքնաստ ու Հանգոյի դէմ մօլեգին գործունէութիւն մը ցոյց

տուած էր, ու Չօպանեանի մէկ ճառին ալ անձամբ ներկայ գլուխուած:

Բայց այս երեք նախարարներուն ամէնքն ալ, խորհրդարանին հաւանութեամբ, յաճառաբար մերժեցին Հայերու ինքնաստ ունէ մէկ ձեռնարկի ընկերակցիլ, զոր հելով նոյնիսկ Արեւելքի մէջ իրենց գարաւոր աւանդութիւններն. Բայց աւելին կայ. անգլիական կառավարութեան հրատարակութեան տուած դիւանագիտական մէկ կապոյտ գրքոյկէն կը տեղեկանանք թէ, 1897ին թօքաթի կոտորածին վրայ, լորտ Սօլզպերի, այն միջոցին Անգլիոյ արտաքին գործերու պաշտօնեայ, Ֆրանսայի կը դիմէ, բացորոշապէս առաջարկելով որ երկուքը միատեղ (Ֆրանսա ու Անգլիա) անմիջապէս թուրքիոյ դէմ վճռական ձեռնարկի մը նախաձեռնութիւնը ունենան. Տը Գոնդէսօն հարկւրապետը իր «քրիստոնեաներու միւսկիւմաներ» երկին մէջ, ինչպէս Մ. Լափիս Ռիլիոն տը Բառիի մէջ՝ Ժամանակին մանրամասնօրէն բացատրած են թէ՛ այս բացորոշ հրաւիրանքին հանդէպ, Ֆրանսական կառավարութեան վարժուները որքան անշնորհ ու ոճրագործական եղած է:

Նոյնպէս, Ֆրանսայի արդի «ճարպիկ» նախարարը, Տէլբաւէ, արժատական-ընկերակցական յառաջդիմագոյն դահլճի մը անդամ, հայկական խնդրոյն վրայ իր յայտարարութեանցը մէջ, անմիջական լուծում մը անկարելի ընելու հանգամանք ներկայացնող դժուարութեանց յիշատակութեամբ միայն բաւականացաւ:

Արդ, անցեալ դէպքերը նկատողութեան առնելով, երկրաշափաւան բացորոշ ճշդութեամբ կարելի է հետեւցնել թէ, Ֆրանսայի արտաքին գործերու բոլոր նախարարները, ինչ կուսակցութեան որ ալ վերաբերին, յաճառաբար մերժեցին Հայեր ինքնաստ վճռական քայլ մը առնելու, վասն զի առայժմ Ռուսիան Հայերու աննպատակ քաղաքականութեան մը հետեւելով, Հայերը ունէ կերպով նպատակաւորելը Ռուսիոյ դժկամա-

կուսակցութիւն պատճառով պիտի ըլլար. մինչդեռ Գրանսա, իր ներկայ արտաքին քաղաքականութեան հիմըրած է Ռուսիոյ հետ աշխարհի ամէն կողմերը համախորհուրդ գործել. այնպէս որ, Ռուսիոյ հետ իր զինակցութիւնը իրեն համար մահու և կեանքի խնդիր մը ըլլաւ. իսկ, հարկադրուած է—կամայ կամ ակամայ, քիչ կարեւոր է—հայկական խնդիրն ալ, Հայերն ալ Գրանսայի գերագոյն շահերուն առջեւ զոհել:

Ահա թէ ինչպէս կը բացատրուի որ, չնայելով եղած բոլոր դիմումներու ու հրատարակութեանց, Գրանսայի նախարարը Տէլքուէ միշտ խնդիրը կը քննարկէ, ամէն անգամ որ կոտորած մը Հայերը վերատին իշեցնէ, ու ձեռք կառնէ միայն անազգու միջոցներ, ինչպէս հոս հան հիւպատոս զրկել, որոնք խնդրոյն լուծումին ունէ արգելաւոր հետեւանք զանալով հանդերձ, ուշադրութիւնները գոհացնելու պատրանքը կը վայելեն:

Կը հետեւի թէ, որպէս զի Գրանսայի մէջ մեր գործունէութիւնը արգելաւոր ըլլայ, որպէս զի Հայերու ինպատ Գրանսայի գործակցութիւնը ապահովենք, տիրականօրէն անհրաժեշտ է որ Ռուսիոյ բարեացակամութիւնը գրաւենք. հայկական խնդրոյն լուծումը, երբ այս երկու պետութիւնները մեզի նպատակաւ ըլլան, այն ատեն մեծապէս պիտի դիւրանար:

ԼԱՅՈՒՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԹԻՐԷ կը պարունակէ Անատոլ Լըռուա Պօլիէօի մէկ ճառը, ուր այս ակաւորը քաղաքագէտն ալ հայկական խնդրոյն միակ լուծումը Գրանսայէն ու Ռուսիայէն միայն կալիւնկալէ:

Կը մնայ ուրեմն քննել թէ՛ 1) կարելի՞ է միթէ ռուսական ու հայկական շահերը իրարու հետ հաշտեցնել. 2) ինչ միջոցներ կը պահանջուին, ինչ զոհողութիւններ հարկաւոր են Ռուսիոյ բարեացակամութեան արժանանալու համար:

Առաջին տեսակէտը ալապէս կենդան է. մեր մէջը առածի կարգանցած է թէ Ռուսիա Հայաստանը պիտի գրաւէ. թէ Ռուսիան հայկական կոտորածները քաջալիւրեց, վասն զի հայ տարրին տկարանալուն ու հայաբնակ գաւառներու խառնակ վիճակ մը ունենալուն մէջ անհուն շահ ունի, եւ այլն. մեր հրապարակագիրները, որոնց գլուխը Արեւիքեանը և ուրիշներ, տարրիներու ընթացքին մէջ մեր ականջները այս յանկերգներով խլացուցին. և սակայն՝ ապաքէս խօսողները ինչ առաջարկ կը ներկայացնէին. ունէ՞ին արդեօք միջոց մը, որով կարենայինք Հայաստանը «Արեւելեան Արշի» թաթերուն մէջէն ազատել. պիտի յանդգնէին արդեօք մեզի առաջարկել թէ, մեզի պէս դարաւոր

ստրկութեան ներքեւ հեծեծող ցեղ մը՝ Մօսկովեան բանակներու դէմ դիմագրական միջոցներով մաքառելու երազա՛քով օրօրուելու էր. Հակառուս քաղաքականութեան ամենէն տաղանդաւոր ջատագովին, Պ. Արեւիքեանի բանաձեւը հետեւեալ կերպով կրնայինք ամփոփել. «Ռուսիան Հայաստանը անպատճառ պիտի գրաւէ. ուրեմն դժգոհք, երբ Հայաստանի մէջ մենաշնորհներ ձեռք կը ձգէ. քիչ մը հանգրտանա՛ք՝ երբ բարեկարգ մեց կողմնակից Գերմանիան կը յառաջդիմէ, եւ այլն»:

Այս ձեւ քաղաքական մը՝ աւերկայ լրջութեան առհասարակ չէ. լուսագոյն էր խնդիրը պարտաւոր իր բովանդակ իրականութեամբը քննել ու գործնական նպատակաւ հիշ մը որոնել. ամէնքս ալ հայրենասէր ենք, հասկրցուցաւ. ամէնքս ալ զօրաւոր ու ընդարձակ Հայաստանի մը գոյութիւնը մեր սրտին խորը կը կրկնէք. բայց երբ կը տեսնենք թէ՛ առանց Ռուսիոյ ու միմիայն Անգլիոյ ուղեղով, հայկական խնդրոյն կարգադրութիւնը, ինչպէս անցեալին մէջ, ուղղորդելի վիճակ մը դատապարտուած է. երբ կը տեսնենք նոյնիսկ թէ՛ Ռուսիան բարձրակարգէս Հայաստանը գրաւել որոշած է, ուրեմն մեզի միջոց մը կը մնայ. ամբողջէն զոհել մնաւ մը ազատել. ձեռք ձգել Ռուսիոյ աւակցութիւնը, նոյնիսկ Հայաստանը եթէ զոհել ալ պէտք ըլլայ, քանի որ ուղենք կամ չուղենք, Հայաստան մեր կամքին հակառակ պիտի զոհուի. մինչ Ռուսիոյ համակրանքը վայելելով, կրնայինք գոնէ տարած ակնկալութիւնը ունենալ Հայաստանէ դուրս թուրքիոյ միւս հայաբնակ գաւառներուն մէջ Հայերու ճակատագիրը փոփոխուլ թեան ենթարկել. ու կը կարծեմ թէ հայրենասիրութիւն պիտի չըլլար գոնէ հայաբնակ նահանգներու այս մասը բարեկարգելու չը հետապնդել, եթէ միւս մասերը անփրկելի կորուստի մը գատապարտուած են:

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ԲՐՈ ԱՐՄԵՆԻԱՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

Բրո Արմենիան հիմնարկութեանը երրորդ տարեշրջանին աւերկայ, Բիւէն Գիյոս նոյն թերթին վերջին համարին մէջ կը գրէ. «Մենք ալ մեր տարեգրքները ունինք. այս թուով Բրո Արմենիան երրորդ տարեշրջանը կսկսի ու առանց յոգնելու պիտի շարունակենք մեր ձեռնարկած գործը, որ բոլորովին ապարդիւն չեղաւ. Նոյնիսկ 1895—96ի ահալի կոտորածներէն ետք, կապոյտ ու դեղին գրքերու, ինչպէս խորհրդարանային վիճաբանութեանց յայտնութիւններէն ետք, հայկա՛ց

կան խնդիրը Եւրոպայէ թերի կերպով ճանչցուած էր, ու դեռ շատ բան պէտք է որպէս զի ամէն կողմ պէտք եղածին պէս ճանչցուի:

«Իրարու միշտ նման զէպքերու միօրինակ՝ բայց հարկաւոր կրկնութեամբ, շնորհիւ միշտ ճշգրիտ թղթակցութեանց՝ որոնք հիւպատոսներու տեղեկագիրներով ալ հաստատուեցան, քիչ քիչ քաղաքակիրթ ըսուած պետութիւնները յուզուեցան ու շահագրգռուելու սկսան այս անհաստատու աներեւակայի հեռաւոր տառապանքներով. անոնք սոսկումով կը հասկնան թէ միմիայն ոճիրի ու բռնութեան վրայ հիմնուած կայսրութիւն մը՝ իրենց աւելի կոմ նուազ մեղսակից կառավարութեանցը կողմէ կը թողարկուի:

«Մեր տիրական պարտականութիւնն է ուրեմն հայկական մարտիրոսութեան մանրամասնութեանցը խելամոլի ու առանց յոգնելու մատնանշել պատասխանատու դրութիւնն ու մարդը. Պէտք է նախ որ զէպքերը հրապարակուին. անոնց մեկնութիւնը երկդիմի չէ. անոնք արդէն ինքնին շատ բարձր կը խօսին:

Առատ վաշտօնագրութեանց հրատարակութիւնը յառաջ բերաւ միջադեպին համակրանքի այն մեծ շարժումը, որը յանգեցաւ Պաիւսէի համաժողովոյն. Ունայն և պղատոնական համակրանք. երբէք՝ նոյն իսկ ամենէն աւելի աննպատ տրամադրութիւններով ոգեւորուած երկիրներու մէջ, ինչպէս Գերմանիան, հանրային կարծիքը փոփոխութիւն կրեց. նոյնիսկ կիսապաշտօն լրագրողներու լեզուն Համաժողովէն առաջ ու ետքը նոյնը չեղաւ, ու կը թուի թէ ալ հասկցած ըլլան որ՝ որպէս զի կարելի ըլլայ երկիր մը տնտեսապէս նուաճել, պէտք է նախ այդ երկիրը բազմաբնակ ու հարուստ ըլլայ. թէ փոքր-Ասիոյ մէջ Գերմանական գաղութականութեանց եւ յազանքը ծանրապէս պիտի վտանգուէր՝ եթէ Եւրոպական բարքերն ու մշակումը իւրացնելու ամենէն աւելի ընդունակ ժողովուրդը ամբողջովին բնաջնջուէր:

«Ուրիշ տեղեր, կառավարութեանց վրայ հանրային կարծիքին ազդեցութիւնը ալ աւելի զօրաւոր եղաւ. անցեալ ամառ, Գրանսա. կան կառավարութեան կողմէ հիւպատոսի մը Մուշ ուղարկուիլը աներկբայ Սասունի զէպքերուն փորագրութեամբ ամենէն բարեգէպ ազդեցութիւնը տուաւ. պատրաստուած ու մօտաւոր կոտորածը տեղի չունեցաւ, վասն զի զայն ժամանակին իմացանք ու վասն զի ամէն կուսակցութեան պատկանող Գրանսայի երեսփոխաններու Նախարարին ըրած դիմումները զայն հարկադրեցին որ պէտք եղած միջոցները ձեռք առնէր. ինչպէս Պաիւսէի Համաժողովը կը

պահանջէր, ամենէն աւելի սպառնալիքի ենթակայ վայրերու մէջ հիւպատոսական նոր պաշտօններ պիտի ստեղծուին. այժմ խորհրդարանին ենթարկուած հաշուեկշիռ ծրագրին մէջ պահանջուած նոր վարկերը կը բովանդակեն վանի դեր. հիւպատոսին սահմանաւոր ամսաթուակի գումարը, ու Պաղատի դեր. հիւպատոսութիւնն ալ հիւպատոսութեան կը բարձրանայ. փոխանակ Մուշ զուգուած գործակատարին պէս ակնառեսի մը, գործուած կամ խորհուած բռնութիւններն ու ոճիրները մնայուն վկայ մը պիտի ունենան. Բայց, ինչպէս դիտել կուտայ Գրանսայի Տէ Բուէսանսէ իր յօդուածին մէջ զոր աւելի վարը կարտապանք, (ակնարկութիւն Օթօրի մէջ Տէ Բուէսանսէի հրատարակած յօդուածին, զոր իրաւունքի ընթերցողներուն նախապէս ծանօթացնել փութացնէր), ատոնք չարիքին ծանրութեանը ու տարածութեանը համեմատութեամբ անկատար միջոցներ ու դարձանք են. Անշուշտ, այսպէսով մարդկային կեանքը կը փրկուին ու կարգ մը տառապանքներ մեղմացում կը գտնեն. բայց հայաբնակ նահանգներու «սովորական» վիճակը ահալի կը մնայ ու աշխարհիս մէջ ոչ մէկ ժողովուրդ պիտի նարենար, առանց անհետելու, այսպիսի դրութեան մը աւելի երկարօրէն ենթարկուիլ:

«Ահա ասոր համար, ինչպէս մեր առաջին թուով կըսէինք, պիտի չդադրինք Պաիւսի գաշնագրին ճիշդ յօդուածին գործադրութիւնը պահանջելէ: Այս օրէնսգիրտական հատուածին իրենց վերագրած ոչ թէ առանձնաշնորհները՝ այլ իրաւունքները միայն պահանջելով՝ Հայերը ծայրայեղ կամ անիրականալի ոչ մէկ պահանջումի կը հետամտին. ու այս պահանջմանց մէջ ոչինչ կը կենայ կայսրութեան միւս ցեղերէն մէկուն կասկածանքը արթնցնելու կարող, ոչ ալ դաշնագիրը ստորագրող պետութեանց ոճրագործ անշարժութիւնը արդարացնելու արժանի, քանի որ այդ պետութիւնները՝ պէտք եղած միջոցներով՝ պայմանադրութիւնները Սուլթանի յարգել տալ կը մերժեն: Դէպքերը ծանօթացնել և ցոյց տալ թէ մարդասիրական պարզ միջոցները անբաւական ըլլալով, անդորրութեան սիրոյն, զոր կը ջանան չվտանգել, Պաիւսի գաշնագիրը գործադրել պէտք է. ահա մեր Եւրոպացիներու գերը»:

ԳԱՀԱՆԱՅ ԿՈՒԶՈՒԻ

Սիլիստրէի եկեղեցիին քահանայն Տ. Տաճատ մսկնած ըլլալով, հոն քահանայի մը պէտքը կայ. գիմի տեղւոյն թաղ խորհրդին:

ՆԱԽԱԿ ՊՈՒՐԿԱԶԷ

Մի խիստ արագ և յայտարարի թէ՛ տեղւոյս Ս. Խաչ եկեղեցին, որ ժամանակէ մը ի վեր «անպաշտան կերպով» գոց մնալու դատապարտուած էր, այսօր բացուեցաւ Տէր Տաճար քահանայ Դերձակեանի շնորհիւ:

Հիմակ, ժողովուրդը կը սպասէ նորանոր կարգադրութեանց և մանաւանդ վարժարանին բացման: Ո՛հ, շատ եղաւ մանուկներու քաշած թշուառութիւնը, շատ եղաւ անոնց թափառական ինքնաշարժութիւնը մէջ, բոլոր օտարներու առջին:

Չեմ գիտեր, ի՞նչ յանցանք ունին այդ թշուառ մանուկներն, որ չարունակ զոհուած են ու կը զոհուին մեր տնայնական ստոր կրքերուն ու երկպառակութեանց:

Պարկազի մէջ առնուազն յիսուէն աւելի երկսեռ մանուկներ կան, որոնք, դժբաղդաբար, բարեկեցիկ ծնողքներ չունին և զօրք են իրենց մայրերի լիզուէն: Ի՞նչ պիտի ըլլայ անոնց ապագան. չէ՞ որ մաս մը՝ պոչկար վարժարաններ յանախելով և մաս մըն ալ՝ ալժմէն խանութներու մէջ անկիւնը կծկուելով «անհետացած սերունդ» մը պիտի դառնան:

Բաւական է... գոնէ վայրկեան մը մտածենք թէ՛ ամենէն անողորմ սիրտն անգամ չդիմանար մանուկի մը թշուառութեան հանդէպ:

Գիտեմ, պիտի առարկուէ թէ՛ երկպառակութեան պատճառը տեղացին է, որ՝ երկրին օրինաց տրամադրութեան համաձայն, իրաւունք կուզէ ունենալ թաղային ու գրգռողական գործերու մէջ, առանց ձեռնհասութեան և առանց իր պաշտօնի շնորհիւ:

տօնին պիտակցութիւնը ճանչնալու: Ասիկա արգարացում մը չէ. որովհետեւ տեղացի ժողովուրդը՝ փոխանակ հակառակելու, միշտ համակերպելու ստիպուած է և պիտէ թէ իր մէջ վարժարանէ հասկցող մէկը չկայ: Հետեւաբար, բարոյական պատասխանատուութիւնը կը ծանրանայ անոնց վրայ՝ որք կարող են, բայց կամայականութեան մը կը հետեւին:

Յիշատակելու կը ոսկամ ա՛յն բոլոր դարձածքներն, որոնք կատարուեցան այս քաղաքին մէջ քանի մը տարիներէ ի վեր: Յիշորդաբար, երեք քահանաներ պաշտօնի կոչուեցան ու՝ շատ չանցած՝ վտարուեցան:

Ծածկենք այս տխուր գէպերը թանձր վարձույթով մը ու միայն հրաւիրենք Պարկազի հասարակութիւնն որ՝ անխաշար գաղափարէ մը թիւադրուած՝ փութայ իր վարժարանը բանալու, ժողովուրդ փողոցներէն, խանութներէն ու օտար յարկերու ներքեւ կծկուած մանուկները:

Այս է մեր բարոյական պարտքը՝ որուն հանդէպ անտարբեր պարզապէս ամենէն գալչելի ոճրագործն է: Ա՛հա՛ տարւոյն կէտը սահեցաւ... որեւէ մէկ, անմիջական է պէտքը:

Մի՛նչիս ցարգ, պատճառն եկեղեցին էր, հոգեւոր պաշտօնեան էր... ասկից ետքը. կա՞յ առարկութիւն մը: Ըստ իս, եթէ անկեղծօրէն մօտենանք իրարու, եթէ ձեռք ձեռքի տանք, եթէ մոռնանք անցեալը, մանաւանդ մէկդի թողո՛ւնք մեր անձնական անարգ կեղքերը, կարող ենք նորընտիր հոգաբարձուներու տեղ Մասնախումբ մը կարգել, որ անձնութեամբ աշխատի վարժարանի մը բարեկարգութեանը: Եւ չեմ հաւատարմութեանը: Եւ հաւատարմութեանը մէջ գեռ գտնուին անձեր, որոնք մեր կերպ ձեռքով մը ունենան այս կերպ ձեռքով մը: Եւ անոնք ձեռքով մը կարող են մեր վարժարանի մէջ զոհուիլ:

մը բարեկարգութեանը: Եւ չեմ հաւատարմութեանը: Եւ հաւատարմութեանը մէջ գեռ գտնուին անձեր, որոնք մեր կերպ ձեռքով մը ունենան այս կերպ ձեռքով մը: Եւ անոնք ձեռքով մը կարող են մեր վարժարանի մէջ զոհուիլ:

Այո՛, Մասնախումբը մուրալով գործի պիտի սկսի, որովհետեւ դրամ պէտք է չէնք մը վարձելու և վարժարանի մը թոշակներն ապահովելու:

Եւ որպէս զի թիւրիմացութեան մը տեղի չտայ մեր յոգեւածը, փակագծի մէջ առնելով կըսենք թէ՛ «տարի մը առաջ վարժարանի համար պնտուած չէնք» նոյն պարտուց բարձման յանձնաժողովի որոշումը վարձու տրուած է. հետեւաբար թաղ. իրահորդներու հոգաբարձութիւնը պիտի հարկադրուին տարբեր չէնք մը վարձելու... Ուրեմն պէտք չկայ առարկելու թէ՛ ինչո՞ւ Մասնախումբը դրամ պիտի մուրայ վարժարանի չէնքին համար...:

Տա՛ր Աստուած որ մեր գրածը խեղ ոգիով ու չար սրտով չկարդային Պարկազիները. այս գրածիս նպատակը պարզապէս համարաշխութեան մը համար է: Հոգ չէ, զգալու ենք որ մեր ամենուս երակներուն մէջ արիւն մը կայ, որ կը բողբէ և կըսէ մեզի:

— Բաւական է... հայ էք դուք ու հայու արիւն կը կրէք:

Կը յուսամ թէ առիթ պիտի ունենամ այսուհետեւ նպաստաւոր յոգեւածներ գրելու Պարկազի գործերու վրայօք, գիտնալով որ նորեկ հովիւ բանիբուն ու գործունեայ եկեղեցական մըն է:

Թղթակից

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անատոլ Լրուսա Պօլիօ, քաղաքական բարձր հեղինակութիւն վայելող հայասէր մը, Բարիզի ուսական ընկերային գիտութեանց դպրոցին մէջ ճառ մը խօսելով, Հայերուն վերաբերութեամբ հետեւեալն ըսած է. «Ռուսիան, մէկէ աւելի անգամներ, Հայերու իր բարեացակամութիւնը ցոյց տուաւ. անիկա արժանիքը ունեցաւ Սան-Սթեֆանոյի դաշնագրին մէջ զանազան Եւրոպայի ուշադրութեանը յիշեցնել: Կոտորածներէն ի վեր, Ռուսիան իր հօդին վրայ Տաճկահայ գաղթականներու ապստամբարան ընծայեց. բայց, թէեւ շատ անգամներ այդ տարաբախտ ժողովուրդին վրայ իր հովանաւորութիւնը տարածած ըլլայ, կրնանք ըսել թէ Ռուսիան Հայերու համար պէտք եղածը ըրաւ: Ռուսիա ու Ֆրանսա, Ասիոյ այս քրիստոնեաներուն նկատմամբ իրենց պարտաւորութիւնները կատարեցին ամբողջութեամբ. ու քանի որ Ռուսիան ու Ֆրանսան կը պարծին Արեւելքի մէջ իրենց պաշտօնին վրայ, կարելի չէ՛ր որ համաձայնէին տառապեալ ժողովուրդի մը նշխարները փրկելու և Դուռնէն Պեռլիի դաշնագրին գործադրութիւնը պահանջելու համար»:

— Սեն-Բեդարդի Կարիս Վեռնո. մօտիկ ուսական մեծ օրաթերթը կիմանայ թէ Պարսկաստանի արդի Մեծ Եպարզուր հայկական ծառայում մը ունի, ու իսլամութիւնը ընդունած հայու մը թուոն է. մեր նախորդ թուով հրատարակած Պարսից Շահին ճառին մէջ, ինչպէս ընթերցողները յիշելու են,

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(33)

ԹԻԱ ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՇԱՏՐՈՒՄ ԳԵՏԻԿԱՅԻ ԿՈՒՐԵ

— Այո՛, աշխատինք... բայց չկոթնենք ժողովուրդի մը ձգտումներուն վրայ, միայն յոյսերն ինչպէս թէ պատրաստ երիտասարդութիւն մը կայ. ո՛չ. ատանկով չենք յաջողիր. որչափ որ կարելի է գիտակցութեամբ պատրաստելու է գործը: Կոտեւելու է, արիւն թափելու է... վերջապէս մեռնելու է... սակայն գիտակցաբար ու շրջապատից կերպով: Յաջողութիւնը մեր ձեռքն է, եթէ քայլերն իս գոյնաւորութեամբ առնենք:

Վեհափառին այս կրակաբոց խօսքերը, թանձր խաւարի մը մէջ, հանգստիկ ծովու ալիքներուն յէին, այլ ա՛յն երեք հայրենասէր հոգիներուն համար էին, որոնք մտիկ կընէին՝ հազիւ զսպելով իրենց բովանդակ յուզմունքները:

Ամբողջ ժամի մը չափ տեսակցելէ ետքը, հակառակ Վեհափառին փափաքանաց, երեք հայրենա-

ԼՈՒՍԻԱ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ

Լուսինը նոր կը ծագէր Վարազ, գեղեցիկ սալին ետեւէն: Պայծառ աստղերը վառած կանթեղներու պէս կը պղծային խաւարին մէջ: Անուշ հով մը կը սուրար ու կը սփռուէր ծառերու տերեւները: Գիշերուան ժամը չորսին կը մօտենար:

Ատ միջոցին երկու անձեր Վանայ Արարուց թաղէն դուրս ելնելով, ուղղակի Վարազի վանքը տանող ճամբուն վրայ կանգ կառնէին:

Մին Վանականն էր, իսկ միւսը՝ Լուսին:

— Յոգնեցա՞ր, չէ՞, մըմնջեց Վանական՝ խափաղատանքով մը Լուսինայի ձեռքը բռնելէ ետք:

— Ամենեւ ի՛նչ, չեղտեց Լուսինա՝ կանացի ամենէն նուրբ, ամենէն քնքուշ, ամենէն յանկուցիչ ու ամենէն ներդաշնակ ձայնը գնելով իր բացասական այդ բառին մէջ: Երբ քիչի հետ եմ, չեմ յոգնիր:

Բայց հիմակ վախ մը չունինք, Լուսին, աւելի աղէկ է սա ապառաժին տակ քիչ մը հանգչելու երթանք, վրայ բերաւ Վանական:

Լուսին չմերժեց: Ուստի երկուքն ալ ճամբէն չեղելով արտի մը մէջ ցցուած մեծ քարերու տակ հանգչելու գտնին:

Օ՛հ, լուսնի փողփուն ու հմայիկ շողերու տակ տեսնելու բան էր մանկամարդ Լուսինայի ծագեալ հաղուստը: Հագած էր չուռ ու ձիւնի սպիտակու-

թեամբ շալվար մը, որ Մոկացիներու յատուկ ձեւով մը նախուսած էր, հագած էր սըրմալը կանաչագոյն իշիկ մը, որ արծաթէ կոճակներով զարդարուած էր, ու՝ կիսովին կոճկուած ըլլալով՝ տակէն կերեւար իր գեղեցիկ կոճքը ծածկող մետաքսայեռ շապիկը, որուն թեւերը անհիշելի փաթեթուած էին սիրուն բազմակնեւոր վրայ: Հագած էր կարճ, եփենոսէ գոյնով ու ծանրագին դադախիկ մը, որ մինչեւ մէջքը կը հասնէր ու բաց կը թռչէր չալը: Դուռնը գրած էր նոր արախի մը, որուն չուրջը փաթեթուած էին ասայիկ ու փոշի, որոնցմէ կախուած էին ուլունքներ՝ այլազան գոյներով: Ոտքերը կային ձերմակ ու ձեւաւոր արեխներ, որոնց կապերը հիւսուած էին ձերմակ ու սեւ գոյն բուրդէ թելերով: Ձեռքը հաստ դաւազան մը կար:

Գալով Վանականին, աւելի՛ պարզ ու աղքատ գեղացի մը տարազը կը կրէր:

— Կը յիշե՞ս, սիրելի Վանական, ասկից չորս տարի առաջ դիմացի լեռը մնացի, երբ դուն ձերբակալուեցար, մըմնջեց Լուսին հոգեյոյզ ձայնով մը:

— Այո՛... բայց ի՞նչու անցեալը յիշել տուիր ինձի, ընդհատեց Վանական գողգողալով:

— Ո՛հ, չեմ գիտեր... ակամայ յիշեցի, առարկեց Լուսին:

— Ի հա՛րկէ... որովհետեւ պատճառ պիտի ըլլայի քու կորստեանդ, անանկ չէ՞:

(Շարունակելի)

